

## **ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ ՀՈԴՎԱԾ 70-Ի ԿԻՐԱՌՄԱՆ ՀԱՐՅԻ ՇՈՒՐՁ**

### **Լևոն ՕՀԱՆՅԱՆ**

*ՀՀ ՉԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և  
իրավունքի ինստիտուտի ասպիրանտ*

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝ եթե դատարանը, կալանքի, ազատագրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին: Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները: Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը սահմանում է փորձաշրջան՝ մեկից հինգ տարի ժամկետով:

Պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտի վերաբերյալ իրավակիրառ պրակտիկայում առկա են որոշակի իրարամերժ մոտեցումներ՝ պայմանավորված ինչպես այն հանգամանքով, որ ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՔՕ) 70-րդ հոդվածի դրույթները դիսպոզիտիվ են, այսինքն՝ դատարանի հայեցողությանն է թողնված պատիժը պայմանականորեն կիրառելու կամ չկիրառելու հնարավորությունը, այնպես էլ այն բանով, որ դատական իրավակիրառ պրակտիկան միասնական չէ:

ՀՀ Վճռաբեկ դատարանը քննարկվող ինստիտուտի կապակցությամբ դիրքորոշում է հայտնել իր մի շարք որոշումներում: Մասնավորապես, Հ. Բաղդասարյանի վերաբերյալ գործով որոշմամբ արձանագրվել է, որ «... պատիժը կարող է պայմանականորեն չկիրառվել, եթե առկա են դատարանի համոզվածությունը, վստահությունն առանց իրական պատիժ նշանակելու ամբաստանյալի ուղղվելու հնարավորության մասին: Դատարանը նման հետևության հանգում է միայն օբյեկտիվ գոյություն ունեցող տվյալների վերլուծության հիման վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում են պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին...»<sup>1</sup>:

Մեկ այլ Դ. Հովհաննիսյանի վերաբերյալ գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանը դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: Չնայած պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգրքը ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսել, դատարանը պարտավոր է, ղեկավարվելով ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, հաշվի առնել նաև հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը: Դատարանի

<sup>1</sup> Տե՛ս Հուսիկ Սուրենի Բաղդասարյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի 2008 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ԱՎԴ2/0059/01/08 որոշման 24-րդ կետը:

կողմից նշանակվող պատժի արդարացիության հիմնական պահանջն այն է, որ պատիժը պետք է համապատասխանի հանցագործության վտանգավորության աստիճանին ու բնույթին: Պատիժը պայմանականորեն չկիրառելու համար կարևոր նշանակություն ունեն հանցագործության կատարման հանգամանքները, եղանակը, գործիքներն ու միջոցները, մեղքի ձևը, հանցավորի կողմից այդ հանցագործության հանրորեն վտանգավոր հետևանքները նախատեսելու բնույթն ու աստիճանը ...»<sup>2</sup>:

Հիմք ընդունելով նախորդ կետում և համապատասխանաբար նաև վկայակոչված որոշումներում շարադրված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի և բնույթի, հանցավորի անձնավորության մասին և յուրաքանչյուր կոնկրետ գործով անհատականացնել պատիժը: Պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների ցանկի վերլուծությունը ցույց է տալիս, որ քննարկվող հանգամանքները վերաբերում են ինչպես հանցագործությանը, այնպես էլ հանցավորի անձնավորությանը կամ միաժամանակ բնութագրում են հանցագործությունն ու հանցավորի անձնավորությունը: Այդ պատճառով էլ պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները պետք է դիտարկել որպես հանցակազմի սահմաններից դուրս հանգամանքներ, որոնք ուղղակի կամ անուղղակի վերաբերում են հանցագործությանը կամ հանցավորի անձնավորությանը, բարձրացնում կամ իջեցնում են հասարակական վտանգավորության աստիճանը և ազդում պատժի վրա: Դրանց գնահատմամբ է հնարավոր յուրաքանչյուր կոնկրետ գործով անհատական մոտեցում ցուցաբերել ինչպես պատժի տեսակը և չափը որոշելիս, այնպես էլ այն կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս:

Թիվ ՎԲ-50/07 գործով Վճռաբեկ դատարանը 30/03/2007թ. մերժել է ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի բողոքը առաջին աստիճանի դատարանի 22/11/2006 թ. դատավճռի դեմ, որով ամբաստանյալը մեղավոր է ճանաչվել ՀՀ քր.օր. 268-րդ հոդվածի առաջին մասով և 271-րդ հոդվածի առաջին մասով և դատապարտվել համապատասխանաբար ազատազրկման վեց ամիս ժամկետով և տուգանքով՝ 30.000 դրամի չափով: Դատավճռով որոշվել է Քր. օր. 70-րդ հոդվածի հիման վրա վեց ամիս ժամկետով ազատազրկումը պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան մեկ ամիս ժամկետով: Մերժելով բողոքը՝ Վճռաբեկ դատարանը մասնավորապես նշել է. «ՀՀ Քր. օր. 268-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված հանցագործությունը համարվում է ոչ մեծ ծանրության հանցագործություն, պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քր. օր.-ը ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ հատուկ սահմանափակում չի նախատեսել, պատասխանատվության և պատժի անհատականացման համար հիմք են ոչ միայն կատարված արարքի հասարակական վտանգավորության աստիճանի, այլ նաև հանցավորի անձը բնութագրող հատկանիշներ հանդիսացող, նրա սոցիալ-հոգեբանական, սոցիալ ժողովրդագրական, քրեաբա-

<sup>2</sup> Տե՛ս Դավիթ Ռոբերտի Հովհաննիսյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱԲԴ/0078/01/09 որոշման 12-րդ կետը, ինչպես նաև *mutatis mutandis*, ՎԲ-192/07, ՎԲ-50/07, ՎԲ-201/07, ՎԲ-124/07, ԵԱԲԴ/0078/01/09, ԵԱԲԴ/0120/01/09 և մի շարք այլ որոշումներ:

նական և քրեաիրավական ֆիզիկական հատկությունների համակցության ճիշտ գնահատումը (ընտանեկան դրությունը, վարքագիծը աշխատանքում և կենցաղում, աշխատունակությունը, առողջական վիճակը, տարիքը, դատվածությունը և այլն)»: Այս «հանգամանքների» վերաբերյալ Վճռաբեկ դատարանը մասնավորապես նշել է, որ «դատապարտյալը նախկինում արատավորված չի եղել, առաջին անգամ կատարել է ոչ մեծ ծանրության հանցագործություն, ընդունել է հանցանքը և զղջացել կատարածի համար»:

Մեկ այլ գործով անձը դատապարտված է եղել ՀՀ քր. օր. 268-րդ հոդվածի և 271-րդ հոդվածի առաջին մասերով, համապատասխանաբար՝ ազատազրկման վեց ամիս ժամկետով և տուգանքով՝ 50.000 դրամի չափով: Պաշտպանության կողմը վճռաբեկ բողոքում հղում է կատարել Վճռաբեկ դատարանի վերը նշված 2007թ. մարտի 31-ի որոշմանը և խնդրել այն կիրառել որպես նախադեպային դատական ակտ իր գործով:

Պաշտպանը, վկայակոչելով ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերը, նշել է գործով հաստատված այն փաստական հանգամանքները, որոնք, իր կարծիքով, նույնանման են եղել Վճռաբեկ դատարանի կողմից վերը նշված որոշմամբ լուծված գործի փաստական հանգամանքներին, մասնավորապես՝ որ դատապարտյալը ինչպես նախաքննության, այնպես էլ դատաքննության ժամանակ իրեն լիովին մեղավոր է ճանաչել, զղջացել է կատարածի համար, բնութագրվում է դրական, դատվածություն չունի, քանի որ այն մարված է, և վերջին դատավճռին հաջորդող ամբողջ ժամանակահատվածում թույլ չի տվել որևէ օրինախախտում:

Վճռաբեկ դատարանը, իր 2008թ. մայիսի 29-ի որոշմամբ վերադարձնելով պաշտպանի վճռաբեկ բողոքը, նշել է. «Գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ չկան հիմքեր եզրակացնելու, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար: Հետևաբար, բերված բողոքում ՀՀ քր. դատ. օր. 414<sup>2</sup>-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետով նախատեսված հիմքը հիմնավորված չէ»:

Փաստորեն Վճռաբեկ դատարանը չի անդրադարձել պաշտպանի այն հիմնավորումներին, որոնք վերաբերում էին Վճռաբեկ դատարանի պարտադիր ուժ ունեցող որոշման և իր գործի փաստական հանգամանքների նմանությանը:

Մինչդեռ, ինչպես տեսանք, պաշտպանի կողմից որպես բողոքի հիմք նշվել էին այն նույն փաստական հանգամանքները, որոնք Վճռաբեկ դատարանը դրել էր իր՝ պաշտպանի կողմից վկայակոչված որոշման հիմքում: Վճռաբեկ դատարանի երկու որոշումների համադրությամբ հասկանալի չեն դառնում այն հիմքերը, որոնց առկայությամբ կամ պարագայում Վճռաբեկ դատարանը մի դեպքում դատախազի ներկայացրած բողոքը ընդունել է վարույթ և ուժի մեջ թողել առաջին աստիճանի դատարանի կողմից պատիժը պայմանականորեն չկիրառելը, իսկ մյուս դեպքում՝ վերադարձրել է պաշտպանի բողոքը և մերժել պատիժը պայմանականորեն չկիրառելու հնարավորությունը: ՀՀ Դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է ՄԻԵԴ-ի նախադեպերի գերակայությունը և նշում, որ «որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշ-

մամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ»:

Փաստորեն, գլխավոր դատախազի տեղակալի բողոքն ըստ էության բավարարելով՝ Վճռաբեկ դատարանը գոնե հետադարձ կերպով չի պատճառաբանել, թե ինչու նրա կողմից գլխավոր դատախազի տեղակալի կողմից բերված բողոքը վարույթ ընդունելը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության, դատական պրակտիկայի համար, իսկ պաշտպանինը՝ ոչ, և սա այն դեպքում, երբ փաստական հանգամանքները երկու դեպքում էլ նույնանման են:

Մեկ այլ գործով Վճռաբեկ դատարանն այն տեսակետն է արտահայտել, որ եթե դատարանը, կայացնելով մեղադրական դատավճիռ ամբաստանյալի նկատմամբ, նշանակում է քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածում թվարկված պատժատեսակներից (կալանք, ազատագրկում, կարգապահական գումարտակում պահելը) որևէ մեկը՝ սահմանելով դրա չափը, այնուհետև համոզված լինելով, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց նշանակված պատիժը փաստացի կրելու, որոշում է, դատապարտյալի վրա որոշակի պարտականություններ դնելով, նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել<sup>3</sup>:

«Քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման հիմնական պայմանը պատճառաբանված լինելն է: Նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը պետք է հանգամանորեն քննության առնի ինչպես հանցագործության կատարման, այնպես էլ հանցավորի անձին վերաբերող բոլոր հանգամանքները: Կարևորն այն է, որ հանգի հիմնավոր եզրակացության, որ դատապարտյալի ուղղումը հնարավոր է առանց նշանակված պատիժը կրելու<sup>4</sup>:

Այդ հոդվածի կիրառումը հանցագործության տեսակի հետ կապված որևէ սահմանափակման չի ենթարկվում, ինչպես նաև սահմանափակված չէ հանցավոր արարքի վտանգավորության աստիճանով ու բնույթով, ինչպես նաև անձանց շրջանակով, որոնց նկատմամբ այն չի կարող կիրառվել<sup>5</sup>:

Համաձայն «Քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի՝ դատավճիռ կայացնելիս դատարանը ներկայացված հաջորդականությամբ լուծում է հետևյալ հարցերը՝

- 1) ենթակա՞ է արդյոք պատժի ամբաստանյալն իր կատարած հանցանքի համար,
- 2) ի՞նչ պատիժ պետք է նշանակվի ամբաստանյալի նկատմամբ,
- 3) ամբաստանյալն արդյո՞ք պետք է կրի իր նկատմամբ նշանակված պատիժը:

Նշված իրավադրույթից երևում է, որ կոնկրետ պատժաչափով կոնկրետ պատժատեսակի նշանակումը և արդեն իսկ նշանակված պատիժը կրելու անհրաժեշտության հարցի լուծումը ներկայացնում են պատժի հարցերի դատական լուծման գործընթացի ինքնուրույն և հաջորդական փուլեր: Այսինքն՝ դատարանը նախ և առաջ որոշում է ամբաստանյալի պատժի ենթակա լինելու հարցը, այնուհետև՝ դրա տեսակը և չափը, որից

<sup>3</sup> Տե՛ս «Վճռաբեկ դատարանի՝ Գ. Մարտիրոսյանի վերաբերյալ 2008 թվականի փետրվարի 1-ի ՎԲ-01/08 որոշումը»:

<sup>4</sup> Տե՛ս ««Վճռաբեկ դատարանի 02.06.2009թ. թիվ ԱՐԴ/0117/01/08 քրեական գործով կայացված որոշում»:

<sup>5</sup> Տե՛ս «Ս. Ներսիսյանի գործով 2007 թվականի հունիսի 12-ի Վճռաբեկ դատարանի ՎԲ-124/07 որոշումը»:

հետո որոշում՝ ամբաստանյալն արդյոք պետք է կրի իր նկատմամբ նշանակված պատիժը, թե ոչ՝ հաշվի առնելով նշանակված պատիժն առանց փաստացի կրելու պատժի նպատակներին հասնելու հնարավորության հանգամանքը:

Վերը հիշատակված հարցերի լուծման ընթացքում դատարանը պետք է ղեկավարվի ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասի մի շարք դրույթներով:

Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժն արդարացի է, եթե համապատասխանում է հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ ու բավարար է անձին ուղղելու և նրա կողմից նոր հանցանքի կատարումը կանխելու համար:

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է քրեական օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով նույն օրենսգրքի ընդհանուր մասի դրույթները:

Պատիժ նշանակելիս և այն կրելու նպատակահարմարության հարցը քննելիս դատարանը հաշվի է առնում նաև ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ և 63-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: Հանցակազմի սահմաններից դուրս գտնվելով՝ այդ հանգամանքները բնութագրում են ինչպես կատարած հանցագործությունը, այնպես էլ հանցավորի անձը, հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու հանցավորի անձնավորության և հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի մասին՝ համապատասխանաբար բարձրացնելով կամ իջեցնելով պատժաչափը: Դրանց գնահատմամբ է հնարավոր յուրաքանչյուր կոնկրետ գործով անհատական մոտեցում ցուցաբերել ինչպես պատժի տեսակը և չափը որոշելիս, այնպես էլ այն կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս:

Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ կետի՝ պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածով ամրագրված՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու չափանիշները սպառնիչ չեն: Պատիժը պայմանականորեն չկիրառելու իրավական հիմքերը բացահայտելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածում սահմանված իրավադրույթներն անհրաժեշտ է մեկնաբանել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված պատժի նպատակների համատեքստում, համաձայն որի՝ պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները<sup>6</sup>:

Այլ կերպ՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշում կայացնելիս իրավասու դատարանը յուրաքանչյուր դեպքում պետք է քննարկի նաև պատժի՝ սոցիալա-

<sup>6</sup> Տե՛ս «ՀՀ Վճռաբեկ դատարանի 02.06.2009թ. թիվ ԱՐԴ/0117/01/08 քրեական գործով կայացված որոշումը»:

կան արդարության վերականգնման և պատժի ենթարկված անձի ուղղվելու նպատակների իրացման հարցը:

Սոցիալական արդարությունը վերականգնելու և պատժի ենթարկված անձի ուղղվելու մասին կարող է վկայել հանցագործությունից հետո հանցավորի դրսևորած վարքագիծը:

Այսպիսով, վերլուծելով վերոնշյալները, դրանք քննարկելով մի շարք նախադեպային որոշումների լույսի ներքո՝ կարող ենք փաստել, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտը լուրջ կատարելագործման կարիք ունի:

Կարծում ենք, որ ճիշտ կլիներ ՀՀ քր. օր.-ի 70-րդ հոդվածում օրենսդրական մակարդակով հստակեցնել քննարկվող ինստիտուտի կիրառման չափանիշները:

Մեր կարծիքով, պետք է նաև պատիժը պայմանականորեն չկիրառելը սահմանափակել դատարանի կողմից նշանակված որոշակի պատժաչափով, ինչը կնպաստի այս ոլորտում իրավական որոշակիության ապահովմանը:

## **ON THE ISSUE APPLICATION OF ARTICLE 70 OF THE CRIMINAL CODE OF THE REPUBLIC OF ARMENIA.**

**Levon OHANYAN**

*PhD student of the Institute of Philosophy and Law,  
National Academy of Science of RA*

---

The absolute values of the constitution declared the man, his dignity and the fundamental rights and freedoms. The government is committed to their protection. Therefore, the criminal law should be a priority objective for the recovery of damages caused by the crime victim. Today our practice hundreds of victims did not receive compensation for the damage caused to them.

Analyzing these, they discussed a number of decisions in the light of the case, we can state that the institution of conditional punishment needs serious improvement. We think that it would be right 70 article of Criminal Code of the Republic of Armenia shall clarify the level to the institution of legislative criteria. We think it would also be sentenced by the court is restricted to conditional punishment of certain penalty, which would provide legal certainty in this area.